

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գիտութիւն և մամուլ. Բազմութիւն հասարակութեան գիտակցութիւնը. Թիֆլիսի ձիաքաշ երկաթուղին. Հացի առևտուրը Երեւանում. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պոլսի հայոց պատրիարքի ընտրութիւնը. Տեղեկութիւններ Թիւրքաց Հայաստանից. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱՊԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՍՈՒՆ

Վերջին ժամանակներս՝ երբ թէ լրագրութեան մէջ և թէ դասագրքի շրջաններում սկսեց արծարծվել այն միտքը, որ մեր մամուլի մէջ շատ զգալի է մի կամ մի քանի օրինաւոր ամսագիրներէ բացալայութիւնը, համարեա թէ միանգամայն զանազան քաղաքներում, մի քանի անձինք ձեռնարկեցին, կամ գոնէ ցոյց տուցին, որ ձեռնարկեցին ամսագիր հրատարակելու գործին: Եթէ դրանց բոլորի մտադրութիւնը իրագործվի, այն ժամանակ, բացի Պետերբուրգում լոյս տեսած «Արաքս»-ի, որի երկրորդ համարի հրատարակութիւնը, ինչպէս հաւատացնում են, շատ կատարելապէս է, և բացի Մոսկվայում հրատարակվելի այսպէս կոչված «Գրականական և պատմական հանդէսը», որի մասին ամեն կողմ փառաւոր ծանուցումներ են ուղարկվել, — մենք կունենանք երկու ամսագիր Թիֆլիսում, և մի ամսագիր էլ գաւառական մի քաղաքում:

Թէ ինչ կը լինի այդ հրատարակութիւնների գոյութեան գլխաւոր նպատակը, թէ ինչ կը լինի այդ ամսագիրների raison d'être-ը, այդ դժուար է որոշել, քանի որ յայտնի չէ դրանց հրատարակութիւնների պրոգրամը և զրականական գործունէութեան ուղղութիւնը: Գրանով մենք չենք ուզում ասել, որ այդ ամսագիր ամսագիրները և հանդէսների ղեկավարները գրականութեան մէջ անյայտ անձինք են, դրանով մենք չենք ուզում ակնարկել այն կարծրքի վրա, թէ հենց այդ ղեկավարների գրականութեան մէջ անյայտ լինելը արդէն հիմք է տալիս ենթադրելու, որ այդ ամսագիր հրատարակութիւնները մի առանձին երեւոյթ չը պէտք է ներկայացնեն, ինչպէս հաւատացած է շատերը: Ընդհանրապէս, շատ անգամ մարդիկ սխալվում են, երբ ավտօրիտետներով են չափում այս կամ այն գործի արժէքը. և առանց նախապայաւելու, այս կամ այն ամսագիր, այս կամ այն հրատարակութիւն և այս կամ այն մարդու գրական գործունէութեան մասին միայն այն ժամանակ կարելի է ճիշդ և դժբախտ եզրակացութիւն դուրս բերել, երբ փաստեր կը լինեն, այսինքն երբ դուք կունենաք ձեր առաջ այն հրատարակութիւնը կամ այն մարդու կատարած գործը, որի մասին ուզում էք վճիռ տալ, ապա թէ ոչ ենթադրութիւնները շատ անգամ սխալ հետեւանք կարող են հասցնել:

Սակայն մեր խօսքը դրա մասին չէ. մենք ուզում ենք միայն մի քանի խօսք ասել մի շատ կարեւոր խնդրի վերաբերութեամբ, որի վրա ակնարկում է մեր յօդուածի վերնագիրը, և որին ցանկալի է, որ ծառայէ մեր գրականութեան մէջ լոյս տեսնող ամեն մի ամսագիր: Եթէ մեր գրականութեան մէջ գոյութիւն ունեցած ամսագիրները ունենան և ունեն մի աչքի ընկնող պակասութիւն, այդ այն է, որ նրանք շատ արհամարհանում են նայել գիտութեան վրա, և ոչ թէ միայն չեն աշխատել զարգացնել հասարակութեան մէջ գիտութեան մէջ դուրս բերված եզրակացութիւնները թէ տեսական և թէ սօցիալական ամեն տեսակ խնդիրների վերաբերութեամբ, այլ և շատ անգամ իրանց պաշտպանած մտքերով ուղղակի հակառակել են գիտութեան սկզբունքներին: Այդ պատով վարակված են եղել

և հենց այժմ էլ վարակվել են մեր շատ լրագիրները. բայց այդ հարցի մէջ մենք առանձին նշանակութիւն ենք տալիս ամսագիրներին, որովհետեւ լրագիրը, որի պարտաւորութիւնն է ի միջի այլոց հետեւ առօրեայ բոլոր խնդիրներին և նորութիւններին, չէ կարող այնքան աշխուժութեամբ ծառայել զանազան հարցերի գիտական մշակութեան, և նրանց տարրացնելուն, որքան ամսագիրը, որը պարտաւորվում էր մէջ մեծ և մշակված յօդուածներ, ազատ է առօրեայ բազմաթիւ խնդիրներին և նորութիւններին հետեւելու պարտաւորութիւնից:

Բայց, տարաբաղբաւոր, այս կամ այն հարցերի մշակութեան մէջ մեր մամուլի մեծ մասը՝ հետեւելով ամեն տեսակ մաշված գաղափարներին, և վերացական վարդապետութիւններին, միշտ անուշադրութեամբ է տուել գիտութեան ձայնը, միշտ խոյս է տուել, կամ ընդունակ չէ եղել հետեւելու գիտութեան յայտնած մտքերին: Եւ այդ սխալ, անհամակերպ ուղղութեան հետեւանք այն է եղել, որ տարիների ընթացքում թէ էական միջոցներով մէջ համաձայնութիւն չէ կայացել, և հենց այժմ էլ մեր հասարակութեան այն շրջանները, որոնք համարվում են փոքր ի շատե՛ղ զարգացած և որոնց զարգացման աղբիւրը եղել է պարբերական հրատարակութիւնների ընթերցանութիւնը, մի որոշ, մի փոքր ի շատե՛ղ զրական գաղափար չունեն այն հարցերի մասին, որոնք վաղուց արդէն սկսել են արծարծվել մեր մամուլի մէջ: Փոխանակ գիտութեան վրա հիմնվելու, կրկնում ենք, մեր պարբերական մամուլի մեծ մասը ամեն տեսակ հարցերում հիմնվել է ամենանեղ և ամենամաշված հայեացքների վրա, և դրա շնորհիվ է, որ մինչև այժմ էլ ժողովրդի մէջ չեն տարրացած գիտութեան նոյն իսկ ամենապարզ ճշմարտութիւնները:

Այդ, ի հարկէ, ուրախալի չէ, և շատ ցանկալի է, որ ժողովրդի մէջ գիտութեան տարրացնելուն և այս բոլորի մեր մէջ յարուցված խնդիրների գիտական մշակութեան նուիրվելին այն ամսագիրները, որոնք պէտք է լոյս տեսնեն մեր գրականութեան մէջ: Պարզելով գիտութեան հայեացքները տեսական խնդիրների մասին, տարրացնելով գիտութեան յայտնած մտքերը ընկերական և հասարակական կենցաղավարութեան վերաբերութեամբ, բացատրելով ընթերցող հասարակութեանը աշխատանքի, իրաւունքի, դրամի և արդիւնաբերութեան վերաբերեալ գիտութեան կարեւորութիւնները, և այն և այլն, մեր ամսագրական հրատարակութիւնները մի ահագին ծառայութիւն մատուցած կը լինեն իսկ թէ դժբախտ է, հետեւելով սխալատեղական ուղղութեան և նեղ վարդապետութիւններին կը շարունակեն ամեն հարցի և ամեն գաղափարի վրա նայել վերացական տեսակէտից, և կը շարունակեն կենդանի ժողովրդին գիտութեան համար վաղուց մեռած մտքերով և անգործ քարոզներով, — այն ժամանակ, թող ներվի մեղ ասել, — ասելի լաւ է դրանք բոլորովն ասպարէզ չը դառն, և ասելի էլ չը պղտորեն մեր հասարակութիւնն նորածին զարգացման գործը զանազան սոփիստութիւններով, որոնցով առանց այն էլ շատ հարուստ է մեր գրականութիւնը և մամուլը:

Խ. Մ.

ԲԱԳՈՒԻ ՀԱՍԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Բազմութիւն մեր խմբագրութեան մէջ ստացված անվերջանալի յօդուածները և դասգրքները՝ այնտեղի քահանայացուների հարցի առիթով, ասելի քան անպատաւեր են Բագուի հասարակութեան համար: Եթէ այդ անվերջանալի դասգրքներին և բողոքներին նայենք, որոնք վաղուց արդէն ըստացվում են, իրաւունք ունենք կարծելու, որ հուշակաւոր Բագուի հայ հասարակութեան բոլոր շրջաններում ներկայումս առանձին խնդիրներ

ի և յուզմունքների նիւթ է դարձել երկու քահանայացուների խնդրը:

Բայց հետաքրքիր է լինում, ինչ հարկաւոր է յուզվել, ինչ հարկաւոր է անվերջանալի խնդիրներ լարել մի այդպիսի ինքն ըստ ինքեան չնչին և մի և նոյն ժամանակ պարզ խնդրի պատճառով: Չնչին ենք ասում, որովհետեւ իսկապէս երկու քահանայացուների խնդիրը մի առանձին նշանակութիւն չը պէտք է ունենայ մի լրագրութեան հասարակութեան համար, որից իրաւունք կայ սպասելու, որ զբաղվի ասելի բարձր, ասելի ընդհանուր և ասելի օգտաւէտ գործերով: Եւ վերջապէս արեւ միջին այնքան յուզվել և անվերջանալի առարկութիւնների նիւթ դարձնել մի այսպիսի պարզ խնդր: Բագուի հասարակութիւնը վաղուց պէտք է հասակացած լինի, որ քահանայական կոչումը ամեն մի լրագրախնդրի և ամեն մի տղեթի տալ չէ կարելի. այդ նոյն հասարակութիւնն է, որ վերագրում է հոգևորականութեանը ահագին նշանակութիւն, և ահագին կշիռ: Քահանայական պաշտօն տալ մի նախկին կօչական արիւն և մի նախկին գին և վաճառիւն, կը նշանակի զուրկ լինել որ և է ղեկավարութիւնից, որ և է ինքնաձայնաւորութիւնից և որ և է ինքնասիրութիւնից: Եւ միթէ Բագուի հասարակութիւնը այդ յատկութիւնները իրան վերագրելու տրամադրութիւն ունի:

Ամեն մի հասարակութեան գիտակցութիւնը և ներքին բարոյական ոյժը բոլորական տպաւորութիւնների և խօսելու մէջ չէ երևում, այլ այն բարոյական սկզբունքների գործադրութեան մէջ, որոնք երևան են գալիս անօրեայ կենսական լիութեան հասարակութեան մէջ դեր կատարող անձինք մինչև այժմ էլ չեն հասկացել, որ հասարակական գործերի մէջ պէտք է հեռու մնալ խղճի հարցերից և անձնական շահերից, այդ դէպքում ամեն մի արկածախնդիր իրաւունք ունի ձգտել ամեն տեսակ պաշտօնի և ձեռնարկութեան, այդ դէպքում այդպիսի հասարակութեան մէջ միշտ անպակաս կը լինեն ամեն տեսակ զեղծումներ և զուրկի երևոյթներ...:

Պատու չէ բերում, իրկում ենք, մի հասարակութեան յուզվել և ապշել մի այդպիսի պարզ հարցի պատճառով, ինչպիսի տղեթներն քահանայական պաշտօն տալն է: Այդպիսի հարցերում փոքր ինչ գիտակցութիւն և ինքնասիրութիւն ունեցող հասարակութիւն պէտք է որոշ և վճառական դիրք բռնէ, և թող չը տայ զանազան անձանց սանձաթափ կերպով վերաբերվելու դէպքի ընդհանուր գործերը: Չանդատվել և բաւականաչափ միայն զանգատներով, խօսքով լողողել և բաւականաչափ միայն այդ խօսքերով, — պատու չէ բերում Բագուի հայ հասարակութեան ոչ մի անհամբեր, որոնց իւրաքանչիւրի համար ասելի պատաւեր է՝ բարոյական սկզբունքներով ղեկավարվելով՝ վճառել այդպիսի փոքրիկ հարցերը, փոխանակ մի կողմից խնդրանքներ լարելու, և միւս կողմից ողբալու և ցաւելու...:

Այդպիսի պարզ հարցերում այլ ևս պէտք չէ մամուլի միջամտութիւնը և անվերջ օգնութիւնը: Եւ մամուլը իրան միայն այն ժամանակ վարձատրված կարող է համարել, երբ հասարակութիւնը կը սկսի գործադրել տարիների ընթացքում բարոյական և արդէն տարրացած մտքերը: Առ այժմ դրանց մի փոքրիկ մասի գործադրութիւնն է սպասվում բագուցից: — և ուրիշ ոչինչ:

ԹԻՖԼԻՍԻ ԶԻԱՔԱՇ ԵՐԱՊԹՈՒՂԻՆ

Երկուշաբթի օր, մարտի 28-ին կայացած քաղաքային դումայի նիստը ամբողջապէս նուիրվեցաւ Թիֆլիսի ձիաքաշի, կամ ասելի ճիշդ կը լինի, այդ ձիաքաշի անկանոնութիւնների և անկարգութիւնների հարցին: Վերջապէս, — ասա թէ ինչ կարելի է ասել քաղաքային դումայի այդ օրվայ նիստի վերաբերութեամբ, որովհետեւ Թիֆլիսի ձիաքաշի անկարգութիւնները այնքան զուրկ

և զայրացրել են քաղաքացիներին, և այնքան դանդաղի նիւթ են դարձել նոյն իսկ տեղական լրագրութեան մէջ, որ քաղաքային դուման ոչ թէ այժմ, այլ դրանից մի տարի առաջ պէտք է զբաղվէր այդ հարցով: Չայնաւորներ Կոլուբանսկի, Թամաշեան, Անանեան, Խվանենկօ և մի քանի ուրիշներ, իրանց բաւական մանրամասն նկարագրութիւններով պարզեցին դումայի առաջ ձիաքաշի զեղծումները, որոնք կատարվում են բնիկական ընկերութեան ձեռքով, այն ընկերութեան, որի ներկայացուցիչները հաւանութիւն ունեն իրանց համարելու ոչ թէ հասարակ չասիացի, մարդիկ, այլ մինչև անգամ չլուսաւորութեան տարածողներ: Չայնաւոր Կոլուբանսկի իր երկար ճառի մէջ նախ և առաջ մատնանի արեց ձիաքաշի ծառայողների կեղտոտ և պատառոտած շորերի վրա, որը զգուհնք է պատճառում ձիաքաշով զննողներին, մինչդեռ այդ ծառայողները լաւ ուժիկ են ստանում, և պէտք է միշտ «համազգեստ» ունենան վառ են նոյն պէս և ձիաքաշի բեկները, որոնք շատ փողոցներում այնքան բարձր են գետնից, որը կառքով դժուար է լինում գնալ և վտանգի չենթարկվել: Չիավարների և կոնդուկտորների անհոգութեան պատճառով վազոնների գնացքը անկանոն է լինում. շատ անգամ ձիավարները վազոնը կանգնած ժամանակ մտնում են մօտիկ զինեմները և արեցողութեամբ պարապվում, և այդ պատճառով վազոնները կանգնած են մնում ոչ թէ այնքան ժամանակ, որքան պէտք է, այլ այնքան, որքան ձիավարի կամ կոնդուկտորի «քէֆն» է ուզում: Գրանից յետոյ մատնանի արվեցաւ, թէ ինչպէս վազոններում շատ անգամ որոշածից ասելի մարդիկ են նստում, թէ ինչպէս կոնդուկտորները անձնութիւններ են գործ դրում տոմսակներ տալու և փողեր մանրացնելու ժամանակ, և այն և այլն: Չայնաւոր Խվանենկօ նկատեց, որ այնքան զեղծումներ վերաբերմամբ կարելի է մեղադրել և քաղաքային վարչութեանը, որը ամեն մի զեղծման համար պայմանագրի համեմատ իրաւունք ունէր ձիաքաշի վարչութիւնից բաւարարութիւն պահանջել, բայց երբեք չէ պահանջել: Երբ հարցը արդէն բաւական մանրամասն առարկութիւնների ենթարկվեցաւ, քաղաքապետը հարցը պարզված համարեց. դրանից յետոյ առաջարկվեցաւ ընտրել մի անձ, իբր վերահսկող ձիաքաշի գործողութիւնների վրա, և ձայների առաւելութեամբ ընտրվեցաւ Չայնաւոր Կոլուբանսկի: Մնում է սպասել և տեսնել թէ ինչ հետեւելի կը հասցնի այդ վերահսկողութիւնը և ինչպէս կը վերաբերվի այդ վերահսկողութեանը ձիաքաշի վարչութիւնը:

ՀԱՅԻ ԱՌԵՑՈՒՐԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Այսօր Երևանում ցորենի խալվարը արժէ 36—38 ռուբլի, իսկ երկու ամիս առաջ նա ծախվում էր 45—50 ռուբլիով: Այսօր հացի առատութիւն է, իսկ երկու ամիս առաջ ժողովուրդը հացի ստատիկ նեղութիւն էր կրում: Այսօր հացավաճառները հացի լիւր տրամ վաճառում են 38 կոպէկով, այն էլ մաքուր և լաւ թխած հացը, իսկ երկու ամիս առաջ մինչև անգամ չէին համարվում վաճառել 40—42 կոպէկով անմաքուր, կիսատ և խմոր հացը, որի պատճառով քաղաքային կարգադրութեամբ հացավաճառներից մի քանիսին բանտ ուղարկեցին, իբրեւ տակաւին չը հնազանդվողներ:

Թէ ինչից առաջացաւ այսպիսի աչքի ընկնող տարբերութիւնը, և՛ հաւ բացատրենք մի քանի խօսքերով: Թէ և այս վերջին երկու տարիներում Կոլվասից, մանաւանդ Երևանեան նահանգից, արտահանվեց բաւականաչափ ցորեն, բայց նախած անցեալ տարվայ առատութեան, չէր կարելի ասել, որ մեղանում հացը սակաւ էր: Մի կողմից 86—87 թվ. հացի առևտրի աշխուժութիւնը, միւս կողմից էլ պատերազմի լուրերը շլացրին մեր

այն ցարենալաճառներին, որոնք որ և է մի ժամանակ կամ մի թեթև կերպով դործ էին ունեցել ցորենի առևտրի հետ Յայտնվեցան շատ ամբարատներ, որոնք զեռ կարելը չը սկսած ըսկանցին փողեր բաժանել զիւղացիներին, մարդիկ ուղարկել ամեն մի գիւղ, ցորենի գինը կամաց ամաց թանկացնել, մինչև որ աշոգեցրին գիւղացու բերքը ձեռքներից խլել: Երբ կարելը վերջացան, գիւղացիներից շատերը իրանց ուտելու և սերմացու ցորեն չունէին, այն ինչ ուրիշ տարիներ շատերը մինչև անգամ ունենում էին մի քանի խալվարներով ամբարած աւելորդ ցորեն: Այժմ երբ մեր ամբարատները աշոգեցրին իրանց ձեռքում կենտրոնացնել ամբողջ նահանգի հացը, նրանք կարծում էին, որ 1879 թվի պէս, ցորենի խալվարը կը վաճառեն թի գիտէ, զուցէ և 200 բուրլով: Բայց այնպէս չեղաւ. մեր ամբարատներին յայտը օդի մէջ ցնդվեց, նրանց երեւակայած թանկութիւնը չը կատարվեց, 1879 թիւը դնաց անդառնալիք...

Մի այսպիսի դեպքում, երբ մի քանի անհատներ մեր երկրում սով էին գուշակում, դուրս եկան այնպիսիները, որոնք Աղստաֆայից սկսեցին բերել տալ բաւականաչափ ցորեն և առատապէս վաճառելով՝ պակասեցրին հացի գինը. միւս կողմիցն էլ այս տարվայ ձմեռը կարճ լինելով, զարուհը շուտ սկսվեց, մի քանի անգամ առատապէս անձրեւեց, եղանակը նկատելի կերպով տաքացաւ, այնպէս որ այսպիսի լաւ եղանակը մի հաստատ գրաւակային էր այս տարվայ հացի և առատութեան: Ուրեմն ինչ էր մնում անելու մեր ամբարատներին, եթէ ոչ ամբարած ցորենը մի կերպ շահագործել, իսկ հակառակ դեպքում ցորենը կը մնար տեղի ու տեղը, վրա կը հասնէր ամառը, ցորենը կը սկսէր տաքանալ ու փշանալ:

Եւ այսօր մեր ամբարատները, նկատելով իրանց սխալը, նորից յայտնվեցան, հրապարակ հանելով ամբարած ցորենը, սրա նրա սօտ գնալով ու հաց առաջարկելով: Բայց ծախսելը միայն այն ժամանակ է աշոգում նրանց, երբ նրանք համաձայնվում են վերս յիշած գներով տալ: Օրից օր ցորենի գինը ընկնում է և զուցէ շուտով խալվարը մինչև 25—28 բուրլի էլ կընկնի:

Ինչպէս այսօր մեր ամբարատները 36—38 բուրլի ցորեն վաճառելով իրանք իրանց են մեղադրում, որ երբ 45 բուրլով շատերը ուղեցին, նրանք չը համաձայնվեցան տալ.—այնպէս էլ մի ամսից յետոյ զուցէ կը սկսեն դարձեալ իրանք նախատել, երբ ստիպված կը լինեն նոյն խալվարը վաճառել 25—28 բուրլով, որ այսօր 36—38 բուրլով չեն համաձայնվում վաճառելու:

Յ. Տ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալ նկատողութիւնը. «Թիֆլիսի Կուկիա թաղի թանդոյեան կոչված հայոց եկեղեցում խառնակութիւնները, մանաւանդ վերջին ժամանակներում, անպակաս են: Տարաբաղաբար այդ խառնակութիւնները և խտրիգանքները մուտք են գործում և նոյն եկեղեցու բակում դանդաղ դպրոցի մէջ և, ի հարկէ, վնասում են ուսումնականին ներքին հանգստութեանը: Ինչպէս երևում է բոլոր իրողութիւններից, այդ բոլորի պատճառը եկեղեցու քահանան է, որը անդադար խտրիգանք է լարում դպրոցի մէջ դործողների դէմ, և արդէն դործը այնտեղ հասցրեց, որ նորիս ոչ թէ միայն կուսեց նոյն դպրոցի հոգաբարձուներից մէկի հետ, որը մի և նոյն ժամանակ և երեքօրին է, այլ և այդ անպատկառ կիւղը հասցրեց մինչև ծեծի, ինչպէս որ հաղորդված էր այդ երկու տեղական ուսումնականներից մէկի միջոցով: Մի անգամ վարժուող եկեղեցու մէջ, այդ տեսակ խտրիգանքի դէպքի դպրոցը, անկասկած, միանգամայն աններելի յանդուգնութիւն է եկեղեցու օր և է պաշտօնեայի կողմից»:

«НОВОСТИ» լրագրում կարդում ենք. «Արաստանի էկզարխ արքեպիսկոպոս Պապադի մտադրութիւն ունի վերանորոգել կողմասան այն եկեղեցիները, որոնք մանաւանդ նշանաւոր են իրանց հեռութեամբ, կրօնական աւանդութիւններով և ճարտարապետութեամբ, որպէս են օրինակ Միխէտեան, Ալափէրի, ս. Նիկայի, Սամթաւէի, Մէտէի տաճարները և այլն: Այդ վերաշինութեան համար հարկաւոր եղած միջոցները զանաւոր համար սրբազան Պապադի միտք ունի կողմա-

սում քրիստոնէութիւնը վերականգնող ընկերութեան անդամներից մի առանձին մասնաժողով կազմել, որի նպատակը լինելու է ծանօթացնել ամբողջ ուսումնասիրութիւնը կողմասի եկեղեցիներին կարիքների և նրա թանկագին սրբավայրերի հետ, որոնք այժմ անխնամ են թողված, որպէս զի դրանով կարելի լինի ազդել բարեպաշտ անձանց վրա և նիւթական նպատակներ ստանալ նրանցից հին տաճարները պահպանելու համար:

Մայրաքաղաքի լրագիրներում կարդում ենք, որ Ֆրանսիայում նոր հնարած «պրօֆէկտոր» անուն կրող նոր ձևի բէլովէրի մոտքը Ռուսաստանում արգելված է:

Մայրաքաղաքի «НОВОСТИ» լրագիրը հաղորդում է, որ Պետերբուրգում արդէն ստացված է «Ճաւանակակից գրողների միջազգային բառարանի» (Dictionnaire international des ecrivains du jour) առաջին տետրակը, որի հրատարակիչն է Ֆլորէնտինական Նիկոլայ հրատարակչական Ֆիլիման, իսկ խմբագիրն է լեռնագիտութեան մէջ յայտնի գիտնական Ա. զէ-Պոլեքսանտիս: Բառարանը տպվում է քառածալ, երկու սիւնակներով, և կը հրատարակվի տետրակներով իւրաքանչիւր ամսի 25-ին, այնպէս որ մէկ տարվայ ընթացքում կը վերջանայ: Առաջին տետրակում, ուր դետեղված են գրողների ազգանունները Ա-ից մինչև Բաբ, հաղորդված են 476 գրողների կենսագրութիւնները: Այդ գրողներից 134 պատկանում են խոսակցի, 128—Ֆրանսիային, 34—Մեծ-Բրիտանիային, 31—Գերմանիային, 19—Սլոնիային, 18—Ռուսաստանին, 15—Պորտուգալիային, 18—Հաւաքական-Ամերիկային, 14—Միացեալ-Նահանգներին, 12—Ունգարիային, 10—Շվեյցարիային, 7—Յունաստանին, 6—Բելգիային, 5—Դոմինիկային, 4—Ելիցարիային, 4—Հոլանդիային, 4—Բուրնիային, 4—Հայաստանին, 3—Ֆինլանդիային, 3—Թիւրքիային, 2—Գանիային, 2—Լեհաստանին, 1—Իսլանդիային, 1 արքային: Այդպիսի միջազգային բառարանը, որ այժմ հրատարակում է պ. Պոլեքսանտիս տարածված Ֆրանսիական լեզուով, մեծ գոհնակութեամբ ընդունվեցաւ զանազան երկրների գրականական աշխարհի կողմից: Դրա չափաւոր գինը (20 ֆրանկ բաժանորդագրութեամբ) առաւել ևս կը նպաստէ դրա տարածմանը:

Հաստատ աղբիւրներից տեղեկացանք, որ մեր նկարիչ Գէորգ Բաշինջաղեան մտադիր է մինչև ապրիլի 15-ը ուղևորվել Կովկասեան փոքր ի շատ և աչքի ընկնող քաղաքներ: Բազու, Գանձակ, Շուշի, Երևան, Ալեքսանդրապոլ, Վարս և այլն, իր նկարների ցուցահանդէսը այդ քաղաքներում ժամանակաւորապէս բանաւո համար Պարոնի նկարների թիւը հասնում է քսանի, որոնց թիւում գտնվում են՝ «Հայերի գաղթականութիւնը Պարսկաստանից 1828 թվին», «Անիի միջնաբերդը», «Վանի լիճը», «Արարատը», «Սևանի լիճը», «Ախուրան գետը» և այլն: Պ. Բաշինջաղեանի զիտաւորութիւնը շատ համակրելի է և դա առաջին փորձ կը լինի մեր կողմասան գաւառական քաղաքներում գեղարուեստական ցուցահանդէսներ բանաւո: Յուսանք որ մեր գաւառական քաղաքները համակրութեամբ կընդունեն մեր նկարչի նախաձեռնութիւնը:

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ ֆինլանդների միլիտարութիւնը խնդրել է 100.000 բուրլու լրացուել փոխաւորութիւն՝ ակցիզային պաշտօնեաների թիւը մեծացնելու համար:

«НОВОЕ ОБОЗРЕНИЕ» լրագիրը լսել է, որ Կովկասեան դատաստանական պալատի առաջնախագահ Ս. Ս. Գոնչարով տեղափոխվում է Բաթեան նահանգները, որտեղ նրան յանձնվում է իրագործել դատաստանական բէֆօրմը: Իսկ մեր դատաստանական պալատի առաջնախագահ նշանակվում է պ. Բաշեմ, որ այժմ Կիւմի դատաստանական պալատի մի բաժնի նախագահ է:

«Մշակի» մարտի 26-ի համարում տպեցինք մանրամասնաբար այն լուրը, որ Թիֆլիսի արտիստական ակումբին առաջարկվում է մեր քաղաքի օպերան յանձն առնել: Այժմ «НОВОЕ ОБОЗРЕНИЕ» լրագիրը իր մարտի 30-ի համարում (տ. ընմն 4 օրից յետոյ) տպում է նոյն լուրը, առանց յիշելու թէ «Մշակից» է վերցնում, այլ իբրև սե-

փական լուր: Ինչպէս երևում է «НАБРАТЕ» լրագրի գովելի սովորութիւնները փոքր առ փոքր ընդհանրանում են մեր տեղական մամուլի և միւս օրգանների մէջ:

Մեզ խնդրում են յայտնել, որ շաբաթ օր, ապրիլի 2-ին, Թիֆլիսի ազնուական բանկի թատրոնում պ. Պետրոսեան (Օրդուբադեան) տալու է մի երաժշտական-գրական երեկոյ, մասնակցութեամբ Թիֆլիսի Կիւմի, պ. պ. Սենեքերիմ Արծրունի կերպէ վէրդիի «Էլնանի» օպերայից և մի ուսուցչի բաժան, մնացած պարոնները կը կարգան կուպլետներ և բանաստեղծութիւններ: Տեղերի գները սովորական են: Սկիզբը 8 ժամին: Տոմարները կարելի է ստանալ թատրոնի կասսայում:

Մեր լրագրի անցեալ համարներից մէկում Բազուից գրած մի փոքրիկ նկատողութիւն էր տըպվել այն երկու տ գ է տ ք ա ճ ա ն ա յ ա յ ց ու ն ե ռ ի մասին, որոնց ձեռնադրութեան հարցը այժմ զանազան աղմուկների պատճառ է դարձել: Բազուի հասարակութեան մէջ, և որոնց մասին անդադար յօդաւորներ և նոյն իսկ բողոքներ են ստացվում մեր խմբագրութեան մէջ, որոնց, ի հարկէ, աւելորդ ենք համարում տպագրել: Այդ մասին «Մշակի» ներկայ համարում ընթերցողը կը գտնէ մի առանձին յօդաւոր: Այժմ, Բազուից այդ երկու տ գ ա ճ ա ն ա յ ա յ ց ու ն ե ռ ի մէկից ստացանք մի նամակ, որը նա խնդրում է տպագրել առանց իր անունը և ազգանունը յիշելու, և որով նա ուղղում է ապաւոյնը և ցուցաբերում էր ինքը տ գ է տ չ է: Տպագրում ենք այդ նամակը առանց մի տառն անգամ փոխելու, իսկ եզրակացութիւնը թողնում ենք ընթերցողին: Ահա այդ նամակը:

«Ի Թիֆլիզ պարօն մըշակի խմբագիր ձեր լրագրի նամակներում տըպված մի քանի տեղեկութիւններ իմ հակառակ գրում» ըն այդ շատ անասովածութիւն ա որ իմ քահանաութեան մասին. զըրում ըն ձեզ տեղեկութիւն տըլօղներն ևս այդ գրողներին բոլորին ճանաչում ըմ որ բոլորը անասովածութիւն ա և բոլորը անխեղձ տըլգէտներ ըն որ իմ մասին սօտ տեղեկութիւններ ըն տալիս թէ ևս տգէտ ըմ կամ էս ըմ էն ըմ բայց պարօն խմբագիրը դորանօվ ձեր պատմական մըշակի պատիւը քըցում: Ըն Բազու քաղաքում ևս եղեղեցական բոլոր կարք կանօնըն շատ լալ գիղէմ թօղ ձեր տեղեկութիւն տօլօղներն դայն ևս նըրանց բոլոր կանօնները սօլօրը ընէմ այս իմ շարադըրութիւնը խընթէմ տպէք մըշակում եթէ միտս ձեռնադրելօղ պարօնը եպէղեցական կարքերն չէ իմանում և անարժան էս կը ևս պատասխանատոյ չըմ քանի որ ինձ լալ ճանաչում ա ժօղօղըրթը քանի տորի ա ևս լուսարարում տեղիս մէծ եղեղեցումըն Թէ այս շաբադըրութիւնը չը տըպէք ևս պատաստ ըմ տըպէլու համար ինչան փօղըն ա վըճարէլ, խընթըրէմ իմ աղիանունըս չըտպէք այլ միայն շարադըրութիւնըս հուսով ըմ որ էք նեղանալ պատասխանէլու ձեր մըշակի հետա:

Բացատրութիւնները աւելորդ են...

ԱՍՏՍՐԻՍԱՆԻՅ պ. Սերբերակեանից ստացանք հետեւեալ նամակը: «Գունավոր 4-ին, ևս իմ երկու ընկերների հետ ժողովել էի 2059 թ. յօդուա Զէլթունի հրկիւղեալների և ձեռ ուղարկել էինք 2050 թ., իսկ 9 բուրլի թողել էինք փօստի ծախսի համար: Բայց փօստայում ծախսեցինք 6 թ. 56 կ., ուրեմն մնում է մեզ մօտ 2 թ. 44 կ.: Ահա ուղարկում ենք այս նամակով այդ մնացորդը 2 թ. 45 կօպ. որ խնդրում ենք հասցնել յօդուա ղէլթունցիներին: Ուրեմն նախկին 222 թ. գումարի հետ այժմ կունենանք խմբագրատանը յօդուա ղէլթունցիների ընդամենը 224 թ. 45 կօպ.:

Որովհետև շատերը, որոնք փող են նուիրել յօդուա ղէլթունցիներին և փողը են խմբագրութեանն են հասցրել, հարցնում են մեզ թէ ինչի ենք տպագրում նուիրատուների ցուցակները, մենք նորից ստիպված ենք բացատրել որ նուիրատուների ցուցակների տպագրելը մեզ անհնարին է: «Մշակը» առհասարակ շատ նիւթեր ունի, որոնք իրանց հերթին են սպասում, բայց սրանից այժմ «Մշակը» միայն շաբաթը երեք անգամ է հրա-

տարակվում,— և ինչ կը լինէր ընթերցողների դրութիւնը, եթէ մեր լրագրի խաբարները համարում մի երկու կամ երեք սիւնակ լցնէինք անուններով, ազգանուններով ու թանձաններով: Բաժանորդները շատ քիչ բան կունենային կարգաւ: Մենք մի քանի անգամ արդէն ասեցինք և կրկնում ենք որ երբ ղէլթունցիների օգտին հանգանակութիւնը կը վերջանայ, մենք կը յանձնենք բոլոր ցուցակները Թիֆլիսի յանձնաժողովին, որը եթէ ուզենայ, կարող է հրատարակել նուիրատուների բոլոր ցուցակները առանձնապէս: Իսկ փողերը, որ ստանում ենք, հօ բոլորը տեսնում են, որ անմիջապէս հասցնում ենք թեմիս առաջնորդին, որ իր կողմից յանձնում է յանձնաժողովի գանձապահին, իսկ սա բոլոր փողերը իսկոյն ուղարկում է Կ. Պօլսի յանձնաժողովին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԻ ԸՆԾՐՈՒԹԻՒՆԸ

Կ. Պօլսի հայոց Ազգային Ժողովի մարտի 11-ի կայացած նիստում արդէն պաշտօնապէս հրապարակ հանվեցաւ Թարութիւն պատրիարքի հրաժարականի հարցը: Ինչպէս յայտնի է, Թարութիւն պատրիարք վաղուց ընտրված է Երուսաղէմի պատրիարք, բայց մինչև այժմ էլ չարունակում է մնալ Պօլսում, մինչև այժմ էլ չարունակում է Պօլսի պատրիարք համարվել, չը նայելով որ նրա յարաբերութիւնները Բ. Դրան հետ վերջին ժամանակներս այնպիսի տիրալի կերպարանք են ըստացել, և նրա ժողովողականութիւնը մի քանի արդէն յայտնի գործերի պատճառով այնքան պակասեց, որ նա պէտք է ինքը իր սեփական կամքով և ուղարկութեամբ հեռանար Պօլսից իրան աւելի անհամակրելի չը դարձնելու համար, մանաւանդ որ Երուսաղէմի պատրիարք լինելը նա շատ է ցանկանում, և իր ժամանակին էլ ամեն միջոց գործ է դրել Երուսաղէմի պատրիարք ընտրելու համար: Մենք չենք խօսի Թարութիւն պատրիարքի դործունէութեան վերաբերութեամբ, և այժմ աւելորդ էլ ենք համարում մանրամասն քննադատութեան ենթարկել նրա կատարած գործերը: Այդ թողնում ենք մօտիկ ապագային, երբ առիթ կունենանք խօսելու, թէ ինչ ընթացք պէտք է բռնէ Պօլսի նոր պատրիարքը: Բայց որ Թարութիւն պատրիարքը պէտք է հեռանայ Պօլսից,—այդ շատ հասկանալի և շատ կարևոր է: Նա ինքն իրան այնպիսի դրութեան մէջ է դրել թիւրք կառավարութեան առջև, որ ոչինչ աղքեցութիւն չունի, և առիթ էլ չունի ենթադրելու, թէ մի որ և է կարևոր գործում աշոգութիւն կարող է ունենալ: Բ. Դրան առջև Թարութիւն պատրիարք իսկապէս ներկայումս խաղալիք է Բ. Դրան ձեռքում: Այդ մի կողմից, իսկ միւս կողմից նրա վրա արդէն կաւածածանքով են նայում թիւրքահայերը,— և այդ հանգամանքներում ինչ կասկած որ նրա Պօլսի պատրիարքութիւնից հեռանալը պէտք է որքան կարելի է շուտով կատարվի: Մարտի 18-ին Ազգային Ժողովի կայացած նիստում, ինչպէս երևում է Պօլսից մեզ ուղարկած տեղեկութիւններից, շատ երեսփոխաններ ցանկացել են ուղղակի հարց բարձրացնել պատրիարքի հրաժարականի մասին:

Սակայն Թարութիւն պատրիարքի Պօլսում մնալը այնքան ձեռնտու է թիւրք կառավարութեան, որ զօրաւոր թէ Բ. Դրան հաշտ աչքով նայի նրանց վրա, որոնք պահանջում են պատրիարքի հեռանալը, այսինքն չեն ուղղում այն մարդու Պօլսի պատրիարք լինելը, որին ինքը կառավարութիւնը շատ է ուղում: Եւ այդպիսով նոր պատրիարք ընտրելու կողմնակիցները պահանջում են, որ Երուսաղէմի պատրիարքական աթոռը թափուր չը մնայ,—կամ ուրիշ խօսքով, որ Թարութիւն պատրիարք Պօլսից հեռանայ և Երուսաղէմ գնայ: Թէ որքան գովելի են այդպիսի ելեկները,—այդ թողնենք: Բայց Պօլսի ազգային ժողովը չը պէտք է մոռանայ, որ ինքը մի շատ մեծ սխալ է անում, ներկայ հանգամանքների մէջ այդպիսի դրութեան մէջ պահելով պատրիարքական հարցը: Այժմ Պօլսում զլխաւոր ուղարկութիւնը դարձրած է նոր պատրիարքի ընտրութեան վրա: Ո՞վ պէտք է լինի նոր պատրիարքը,—ահա հարց, որի մասին, ինչպէս երևում է, շատ տարբեր կարծիքներ ունեն Պօլսի երեսփոխանները, մանաւանդ որ ներկայումս Պօլսում գտնվող մի քանի կաթոլիկոսներ խտրիգանք են լարում իրանց անհա-

1-15 (4)

1—3

8—10

(4.)

90—100 (2.)

3-4

9—10

93—100

13-50 (b)

(7) 11-50

Иногородные, желающие получить брошюры, благоволят присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.
Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (7)

17—20 (7)